

2. Յաջորդ շրջաններէն զիտենք, որ Հ. Ղ. Ալիշան տեսուչ ընտրուած ատեն (1848 Մայիս 20)՝ իրեն օգնական կը սահմանուի Հ. Մանուէլ, «որ ի 20 աւուրց հետէ ի վանս եկեալ ի վարժարանէն», ուր յետոյ կրկին կը վերադառնայ. այսու՝ ինքնին կը ճշդուի հոս իր սոսկական ուսուցչական պաշտօնը Մայիս 10-ին:

## Դ

### ՏԵՍՈՒՉ

### Հ. ՌԱՓԱՅԷԼ ԹՐԵԱՆՑ

1847 ՅՈՒՆՈՒԱՐ 21 — 1848 ՄԱՅԻՍ 30<sup>1</sup>

#### ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ

#### ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ՝ շար. ց1848 Մայիս 30,

#### ՄԱՏԱԿԱՐԱՐ

#### ՈՒՍՈՒՑԻՉ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՔԱՋՈՒՆԻ՝ շար. ց1848 Մայիս 10,

### ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Կը թողու պաշտօնը՝ վասն զի այս թուականիս վերակացու կ'ընտրուի վանքի Նոր-ընծայից:

## Ե

### ՏԵՍՈՒՉ

### Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

1848 ՄԱՅԻՍ 30<sup>1</sup> — 1850 ՕԳՈՍՏՈՍ 29

#### ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ

Հ. ԵՂԻՇԷ ԱԼԵՍՆԱՔԵԱՆ՝ 1850<sup>2</sup>,

#### ՓՈԽ-ՏԵՍՈՒՉ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՔԱՋՈՒՆԻ (և «օգնական»)՝ 1848 Մայիս 30,

#### ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ

#### ՄԱՏԱԿԱՐԱՐ

#### ՈՒՍՈՒՑԻՉ

#### ԱՇԽ. ԵՂԱՍՅՐ

ԵՂ. ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒՄՈՒՏԵԱՆ և ԵՂ. ՕԳՈՍՏԻՆՈՍ ԾԵԱՆԻ՝ 1848,

### ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հ. Ալիշան 1848 Սեպտեմբեր 5-ի Նիստով՝ փոխանակ Հ. Գ. Ավագովսի - որ փարիզ դրկուած էր - կը կարգուի միանգամայն Ատենադպիր Ուխտիս Վարչ. Ժողովոյն, զոր կը վարէ մինչեւ իր Լոնտրա երթալը, այն է 1851 Դեկտ. 26-ին. (Ժող. Արձ.):

2. Ամսաթիւը պակսելով՝ անորոշ կը մնայ իր գործակցութիւնը Հ. Ալիշանի տեսչութեան այս շրջանին: